

Հայոց լեզվի հանրապետական փուլի հարցաշարերի պատասխանները և գնահատման չափանիշներ – 12-րդ դասարան

Պատասխանները՝

2. Ամենքի նման ես էլ մանկուց՝ աչքս բացելուն պես, տեսել եմ Մասիսը և իր վիթխարի ստվերն իմ գլխին: Նա, իհարկե, մենակ չէր. Արագածը կար առջևս՝ ծաղկունքի հյուսկեն գոտիներով: Բայց նա ինձ համար լեռ էր, Մասիսը՝ կենդանի ու գերբնական էակ: Հազարավոր տարիներ է՝ սրբազան լեռն անբաժան է իր գույզից. հառնել են նրանք՝ Մեծ ու Փոքր Մասիսները՝ իրար ձեռք բռնած, ինչպես հայր ու որդի: Արաքսի աջ ափից սկսած՝ Փոքր Մասիսը, սակայն, թաքնվում է հոր՝ փառահեղ քղամիդով շղարշված թիկունքին, ու մենակ է մնում տիեզերքում նմանը չունեցող բիրլիական լեռը, որ, թվում է, այգաբացի ակնապարար ծեփծեքումով վառվող ակնախտիղ շողերի տակ հենց նոր է պատռել երկրի արգանդը՝ դեպի երկինք սլանալով. այստեղ նա այլևս լեռ չէ, այլ բնության հրաշափառ երևույթ: (20)

3. **հյուսկեն**-հյուսված, հյուսվածո, **քղամիդ**- արքայական ծիրանի՝ պատմուճան՝ թիկնոց **ակնապարար**-աչքը պարարող, ակնահաճո, **ծեփծեքում**-սեթևեթանք, պչրանք, նազանք **ակնախտիղ**-աչքը խտղտացնող՝ շլացնող, պայծառ, հրապուրիչ, շքեղ **մանվածապատ**- խառը, խճճված, խառնակ, **խոկում**-միտք, մտածմունք, **ակաղձուն**- հոծ, խիտ, լիքը, **անուրանալի** -անժխտելի, անհերքելի, ակնհայտ, բացահայտ **առնածին**- առնություն՝ արիություն ծնող, արիություն՝ քաջություն ներշնչող

4. **ստվերն**-գոյ., ուղիղ խնդիր, **գույզից**- գոյ., անջատման խնդիր
Մեծ ու Փոքր Մասիսները – գոյ., բուն բաց. **նմանը**- անհավասար. ուղիղ խնդիր
քղամիդով- գոյ. ներգործող խնդիր **այլևս** – մկր., ժամանակի պարագա,
այգաբացի- գոյ. հասկացուցիչ **ճայրահեղ** – անհավասար, ստորագելի
որ- հար. դերանուն, ենթակա **ինչպես** –հար. դեր., ձևի պարագա

5. **ա.** պահանջկոտ, խստապահանջ(**մարդ**), **բ.** խստություն արտահայտող(**տեսք**),
գ.անխախտ պահպանվող(**բարքեր**), **դ.** ոչ ներողամիտ, ոչ թեթևակի(**նկատողություն, միջոցներ**),

ե.չափավոր, առանց ավելորդ զարդարանքի(**ոճ, հարդարանք**),

զ.սաստիկ, ուժգին (**ցուրտ, շոգ**),

է.վիրավորանք պարունակող, կծու (**խոսք, դիտողություն**),

ը.ուժգնորեն (**բուրել**),

թ.անզիջում, առանց զիջելու(**դատել**),

ժ.չափազանց, արտակարգ(**գեղեցիկ**)

6. **ծնկոսկր**, **վիրակապ**, **բևեկն**, **սեղմագիր**, **գետակինձ**, **վերնախավ**, **տողադարձ**, **հանքահոր**, **ոտնաձայն**, **մորաքույր**

7. **մնայուն**, **լեցուն**, **շրջուն**, **կայուն**, **զգայուն**, **ցնծուն**, **արթուն**, **շարժուն**, **սողուն**, **կանգուն**

8. **դնել** **գլխարկը**, **երիցս**, **հարցը այն է, որ...**, **մի՛ խոսեք**, **վերցրի**, **քծնել**, **սնանկանալ**,
ի հաստատումն, **ամսական**, **սրբություն սրբոց**: (2 միավոր)

9. **Սողոմոնի ծիրանին հագնել**-իրեն իմաստուն ցույց տալ,

ձայն բազմաց ձայն Աստծոյ – մեծամասնության կարծիքը՝ խոսքը վճռական նշ-ություն ունի
կրավորական կեցվածք ընդունել- ձեռքերը ծալել, մի կողմ քաշվել, անտարբեր լինել
ժամանակն իր շավիղից դուրս է եկել – Այսօր շատ բան ծուռ, սխալ է ընթանում՝ խոտորվել է

Գնահատման չափանիշները՝

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 1 միավոր:

Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 2 միավոր:

Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 1 միավոր:

Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 5 միավոր:

Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:

Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:

Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:

Հարց 9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: